

ՍԱՅԱԹ – ՆՈՎԱՅԻ «ԱՇԽԱՐԻՄԸՍ ԱԽ ՉԻՄ ՔԱՇԻ»
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ 9-րդ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ



Առաջաբանի փոխարեն

Ուսուցումը արդյունավետ կազմակերպելու նպատակով անհրաժեշտ է ոչ միայն տիրապետել դասավանդման փիլիսոփայությանը, երեխաների ֆիզիկական, հոգեբանական և տարիքային առանձնահատկություններին, այլև քաջատեղյակ լինել կրթության ժամանակակից մեթոդներին, տեսակետներին ու ընտրել դասավանդման սեփական հայեցակարգ: Դա փորձել ենք անել մեկ դասի օրինակով:

<<Սայաթ - Նովա>> թեմայի ուսուցումը 9-րդ դասարանում

<<Սայաթ – Նովա>> թեմայի ուսուցումն 9-րդ դասարանում նպատակային է: Թեմային տրված է 4 ժամ: Ստորև ներկայացնում ենք թեմատիկ պլանավորում:

<p><u>ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ:ՄԵԾ ԳՈՒՄԱՆԻ ԵՐԳԵՐԸ</u> 1.Սայաթ-Նովայի կյանքը և ստեղծագործության ընդհանուր բնութագիրը: 2.Մեծերը Սայաթ-Նովայի մասին: 3.Մեծ գուսանի երգերի հմայքը/երգերի ունկնդրում/Աշուղ-բանաստեղծը: 4.Հասկացողություն աշուղական երգի մասին:</p>	<p>Հայ միջնադարյան քնարերգության ժանրերի և նմուշների իմացություն:</p>	<p>Ռուխկյանի ստեղծած դիմանկարը Կիսանդրին Երևանում Փարաջանով <<Նռան գույնը>></p>	<p>Երաժշտություն Ալ. Հարությունյանի <<Ս-Ն>> օպերան Կինո. Հր.Մուրադյան <<Ս-Ն>></p>	<p>Համատեղ որոնում Բազմանիստ հնգյակ Մտազրոհ Քառաբաժան</p>	<p>Կյանքի ժամանակագրակ. աղյուսակ, ստեղծագործությունը:</p>
<p><u>ՍԻՐՈ ՊԻԵՆ: <<ԱՇԽԱՐԻՄԱՍ ԱՆ ՉԻՄ ՔԱՇԻ>></u> 1.Սայաթ-Նովայի սիրո երգերը որպես կյանքի, աշխարհի, մարդու հանդեպ անսահման պաշտամունքի, մարդասիրության արտահայտություն: 2.Կնոջ արտաքին գեղեցկության գովքը: 3.Բանաստեղծության ընթերցում: 4.Բառային աշխատանք:</p>	<p>Միջնադարյան քնարերգության արժևորում, դրանց պատկերային համակարգի ժողովրդական հիմքի գիտակցում:</p>		<p>Երաժշտություն</p>	<p>Քառաբաժան</p>	<p>Կարդալ: Բնութագրել կնոջը՝ ըստ բանաստեղծության:</p>
<p><u>ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ԱՐՃԱՆԻՔՆԵՐԸ</u> 1.Ճկուն ու հյութեղ լեզուն, վառ պատկերները: 2.Պատկերավորման համակարգը</p>	<p>Միջնադարյան քնարերգության արժևորում, դրանց պատկերային համակարգի ժողովրդական հիմքի գիտակցում:</p>			<p>T-աձև աղյուսակ</p>	<p>Անգիր</p>

9-րդ դասարանի աշակերտները կծանոթանան Սայաթ – Նովայի կենսագրությանը և աշուղական պոեզիային, կիմանան մեկ – երկու բանաստեղծություն, դրանց կառուցման առանձնահատկությունները, կբացահայտեն ստեղծագործության պատկերային համակարգի ժողովրդական հիմքը, սիրո հոգեբանության ընդհանուր և համամարդկային գծերը՝ արժևորելով ստեղծագործությունները:

ԴԱՍ 2 - <<Աշխարումբս ախ չիմ քաշի>> բանաստեղծության ուսուցումը

Դասի թեման՝ Սայաթ – Նովայի <<Աշխարումբս ախ չիմ քաշի>> բանաստեղծությունը

Դասի կահավորումը՝ 1. Սահիկահանդես՝ նվիրված Սայաթ-Նովային

2. <<Աշխարումբս ախ չիմ քաշի>> երգը և ասմունքը

Դասի նպատակը

Սովորողը պետք է՝

- արտահայտիչ կարդա, ընկալի և անգիր արտասանի բանաստեղծությունը
- վերարտադրի բանաստեղծությունը հեղինակի և սեփական բառերով
- ընդհանրացնի և հակիրճ ձևակերպի բանաստեղծության հիմնական գաղափարը
- նկարագրի և բնութագրի քնարական հերոսին
- օգտվի տեղեկատվական զանազան աղբյուրներից՝ լրացուցիչ գրականություն, օժանդակ նյութեր
- ինքնուրույն գրառի անձանոթ բառերը, գտնի դրանց բացատրությունը
- դուրս գրի գեղարվեստական խոսքի արտահայտչամիջոցները, ընկալի գեղարվեստական նրբերանգները և պարզաբանի դրանց իմաստային ու գեղարվեստական արժեքը
- գրի առնի բանաստեղծությունից ստացած տպավորությունները
- բանաստեղծության մասին շարադրի իր կարծիքը գրավոր(բանավոր)՝ ելույթ ունենալով ընկերների առջև
- համագործակցել ընկերոջ կամ խմբի հետ՝ դրսևորելով հանդուրժողականություն և հարգանք մյուսների կարծիքների հանդեպ

Դասի ընթացքը

Խթանում – 3-5րոպե

<<Մտքերի տարափ>> մեթոդով խթանվում և ակտիվացվում են աշակերտների գիտելիքները <<Սայաթ – Նովա>> թեմայից:

1. Ասույթներ Սայաթ-Նովայի մասին

2. Անվան բացատրությունը

ա)երգի արքա,երգի որսորդ


բ)Սայադի թոռ

3. Սայաթ-Նովայի կենսագրությունը

ա)ներկայացնել կենսագրությունը մեկական աշակերտի օգնությամբ՝ չխախտելով կենսագրական փաստերի ու դեպքերի հաջորդականությունը

բ)ներկայացնել Գևորգ Ախվերդյանի հետ կապված տեղեկությունը՝ որպես Գահնամակի՝ Հայաստանի նախարարների պատվաստիճանների ցուցակի հայտնաբերողի և Սայաթ-Նովայի կենսագրի:

գ)Ներկայացնել Հովհ.Թումանյանի հոդվածը՝ <<Սայաթ-Նովայի շիրիմը>>, նկարիչ Գ.Բաշինջաղյանի ուրվանկարով արված շիրմաքարի և Վարդատոնի պատմությունը:



Հանձնարարվում է ընթերցել բանաստեղծությունը և դուրս գրել անձանոթ բառ –բառակապակցությունները՝ վերածելով գրական արևելահայերենի:

Իմաստի ընկալում – 25րոպե

Կիրառվում են <<Խճանկար>>, <<Քառաբաժան>> մեթոդները և խմբային աշխատանք:
Խմբային աշխատանք 1. Կարդալ և վերածել գրական արևելահայերենի:

Թիֆլիսի բարբառ	Գրական արևելահայերեն	Մեկնաբանություններ

Խճանկար

Ընթերցել և տուն առ տուն գրել հիմնական միտքը՝ ցույց տալով զգացմունքի և կերպարի զարգացումը:

բան. տները	հիմնական գաղափարը (վերնագիրը)
I տուն	Միրո էության բացահայտում
II տուն	Արտաքին գեղեցկություն
III տուն	Տառապանք
IV տուն	Կարոտ
V տուն	Միրո հավերժություն

Խմբային աշխատանք 2. Կարդալ և դուրս գրել գրական հերոսի ներքին և արտաքինը բնութագրող տողերը:

գոգալի արտաքինը	քնարական հերոսի ներքին աշխարհը
մեջքդ սալբու չինարի պես ոռնգրդ փոսնգի ատլաս է լիզուդ շաքար,պռոշրդ՝ դանդ ակռեքրդ մարքրիտ, ավմազ աչքիրդ ակնակապ թաս	<ol style="list-style-type: none"> 1. սեր 2. կարոտ-Աշխարհս կշտացավ,իմ սիրտս քիզնից սով մնաց... -Ինչ կուլի... 3. տառապանք-Յիս էս դարդին վունց դիմանամ... -Արտասուքս արուն շինեցիր... 4. տխրություն

Քառաբաժան

Ի՞նչ տեսա սիրահարված տղա, գեղեցկուհի, թանկարժեք քարեր՝ մարգարիտ, լալ ջավահիր, արցունք, բլբուլ(սոխակ), ծաղիկներ՝ հովտաշուշան, մեխակ, վարդ, մանուշակ, թևավոր նժույգ, արեգակ, ակնակապ թաս, նոճի	Ի՞նչ լսեցի հառաչանք, մետաքսյա շորերի շրշյուն, ծաղիկների ու խոտերի սոսափ
Ի՞նչ զգացի սեր, տխրություն, կարոտ, սպասում, տառապանք, խռովք	Նոր վերնագիր 1. Էշխդ անքուն 2. Սեր իմ

Կշռադատում -10 - 13րոպե

Խմբային տարբեր աշխատանքներից հետո աշակերտները արտահայտում են սեփական մտքերը սիրո մասին, զնահատում և արժևորում սերը մարդու կյանքում: Կիրառվում է <<Հնգյակը>>

Սեր
հավերժական փոխադասարձ
տառապած ուշացած գտած
սրտատրոփ ու կարոտագին սպասումներով լեցուն
Կարոտ

Ընկալման ավելի բարձր մակարդակ է ապահովում <<Հեղինակի աթոռ>>-ը: Այն աշակերտներին հնարավորություն է ընձեռում պարզել-մեկնաբանել ոչ միայն դասագրքում գրվածը, այլև այն, ինչ ուզում է ասել հեղինակը: Աշակերտները յուրացնում են ինքնահարցման մեթոդը, որը հիմնականում օգտագործում են փորձառու ընթերցողները՝ սեփական ընկալումը ղեկավարելու և խթանելու նպատակով:

Առաջարկվում է <<Հեղինակի աթոռ>>-ը (ուղղորդված հարցերը) .

1. Ճի՞շտ է, որ սերը տառապանք է ծնում:
2. Ի՞նչ նկատի ունեք, երբ ասում եք. <<Վրբեդ շուռ գամ բլբուլի պես>>:
3. Ինչո՞ւ հեռացաք պալատից:
4. Ի՞նչ կասեիք դարասան Բաբկեն Ներսիսյանին:

Տնային աշխատանք-2րոպե

1. Գրել նամակ Աննային

Աննա՛, բոլոր դարերի գեղեցկության իդեա՛լ Աննա, <<դուն դիփունեն բաշ>>, նազանի Աննա...

Քեզ գրում եմ տարիների հեռվից, քեզ, որի սիրով վառված Մայաթ-Նովան մեզ թողեց սիրող սրտի բազում ծալքերն ու գաղտնարանները բացող տողեր, քառատողեր:

Չլինեիր դու, ո՞վ գիտի, չէին լինի սիրո նրբերանգները ներկայացնող սքանչելի տողերը:

Քո հմայող գեղեցկությամբ այսօր էլ շատերին կարող ես նաղաշ-նկարիչ դարձնել, ուր մնաց <<ջրատար>> Մայաթ-Նովային, որը հարցնում է. <<Մագամ սիրտս ունիմ քարած>>, <<Վո՞ւր մե կրակին դիմանամ>>, (դիմանալու բան չէ):

Տարիների ու դարերի հեռվից իմ դարի մարդուն պատկերում ես քո գեղեցկությամբ՝ <<սալբու չինարի բոյով>>, <<մարքրիտ-ալմագ ակռեքով>>...

Դու՛ որպես գեղեցկության իդեալ, այսօր էլ գերում ես շատերին և Մայաթ-Նովայի նման կարող եմք ասել.

-Վա՛յ քու կորցնողին ըլի...

Մայաթ-Նովան մեզանից յուրաքանչյուրն է՝ անկախ սեռից, որին չի կարող չգրավել գեղեցկությունը:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

1. Ասույթներ Սայաթ-Նովայի մասին

ա) Սայաթ-Նովան երկնային քար չէ, այլ հանքաքար, տեղատարափ չէ, այլ հանքային ջուր:

Պ. Սևակ

բ) Մեր վիթխարի Սայաթ-Նովան մի հոյակապ սիրահար է՝ բռնված ու բռնկված սիրո հրդեհով: Միրո լույսի տակ էլ նկատում է աշխարհն ու իրերը, զգում է, որ երվում է, վերջանում է ինքը, բայց մնում է արի ու բարի, անչար ու անաչառ, վեհ ու վսեմ՝ որպես աշխարհի ու մարդու մեծ բարեկամը:

Տաղով եկավ,
Ախով գնաց Սայաթ-Նովան,
Երգով եկավ,
Վերքով գնաց Սայաթ-Նովան.
Միրով եկավ,
Սրով գնաց Սայաթ-Նովան.
Սիրով մնաց Սայաթ-Նովան:

Հովհ. Թումանյան

գ) Ոսկի բառեր, անգին քարեր, լալ ու գոհար շարել ես դու,
Քեզ միայն քո յարն է վառել, քանի՜ յարեր վառել ես դու:

Ե. Չարենց

դ) Սայաթ-Նովայի նման բանաստեղծներով կարող է և պետք է պարծենա ամբողջ ժողովուրդը. դրանք Երկնքից մեծ պարգևներ են, որ ուղարկվում են ոչ բոլորին և ոչ հաճախ. նրանք նախախնամության ընտրյալներն են, որ օրհնություն են դրոշմում իրենց դարին ու իրենց հայրենիքին...

Վ. Բրյուսով

2. Գևորգ Ախվերդյան՝ Սայաթ-Նովայի առաջին կենսագիրը (1818-1861)

Գևորգ Ախվերդյանը ծնվել է 1818 թվականին Թիֆլիսում ռուսական բանակի սպայի ընտանիքում: 1834 թվականին ավարտել է Լազարյան ճեմարանը, 1839-ին՝ Մոսկվայի համալսարանի բժշկական բաժինը: 1839-42 թվականներին Կովկասում աշխատել է որպես զինվորական բժիշկ: Բժշկական ասպարեզում մեծ հեղինակություն ձեռք բերած մասնագետին հրավիրում են Պետերբուրգ՝ որպես ռազմական մինիստր կոմս Ա. Չերնիշովի անձնական բժիշկ: 1847 թվականին վերադառնում է Թիֆլիս, պաշտոնավարության անցնում նախ փոխարքայի գրասենյակում, ապա կարանտինամաքսային գործերի վարչությունում՝ որպես ավագ աստիճանավոր՝ գեներալի կոչումով:


Գևորգ Ախվերդյանը բազմակողմանի ունակություններով օժտված, ամենատարբեր հետաքրքրություններ ունեցող հանրագիտակ անձնավորություն է. նա հայրենի մշակույթին մատուցել է անգնահատելի ծառայություն. զբաղվել է բանասիրությամբ, բարբառագիտությամբ, պատմության հարցերով: Նա հայտնաբերել է հին Հայաստանի նախարարների պատվաստիճանների ցուցակը՝ Գահնամակը: 1842 թ. մայիսի 24-ին լույս է տեսնում Գոգոլի «Մեռած հոգիները»-ը: Չնայած հակասական բուռն կարծիքներին՝ Ախվերդյանը առաջինն էր, որ ճշմարտացի խոսք ասում:

Ժողովրդական երգեր հավաքելու և այն հրատարակելու միտքը հանգիստ չէր տալիս Ախվերդյանին: Նրա ջանքերով հավաքվում են Կովկասում ապրող հայ, թուրք, վրացի աշուղների գրավոր ու բանավոր խաղերը: Նա պատրաստվում էր հրատարակել աշուղական խաղերը, երբ հայտնագործում է Սայաթ-Նովայի «Դավթարը»-ը: Անորոշ ժամանակով Ախվերդյանը հետաձգում է հայ մյուս աշուղների գործերի հրատարակության գործը և զբաղվում միայն Սայաթ-Նովայի երգերով: Իր մտահղացումների մասին նա գրում է Էմինին.

<<Ինձ մոտ հավաքվել են անվանի քամանչիստ Սայաթ-Նովայի 45 կամ 50 երգերը և ցանկանում եմ հրատարակել Թիֆլիսի բարբառով. նրա երգերում այնքան տեղական կոլորիտ կա, որ սքանչելի է>>:

Երեք տարի Ախվերդյանը ճիգ ու ջանք է թափում՝ կարդալու <<Դավթարի>> դժվարընթեռնելի վրացատառ հայերեն, հայատառ թուրքերեն, վրացերեն գրված տաղերը: Ապա գրում է ընդարձակ առաջաբան, ծանոթագրում յուրաքանչյուր երգ, կազմում անհասկանալի բառերի բառարան: Մոսկվայում 1852 թվականին Ախվերդյանի մոտ ընկեր ու բարեկամ, հայագետ ու լեզվաբան Մկրտիչ Էմինի օժանդակությամբ տպագրվում է Սայաթ-Նովայի երգերի անդրանիկ ժողովածուն: Ախվերդյանի օգնությամբ ռուս գրող Յա. Պոլոնսկին թարգմանում է Սայաթ-Նովայի չորս խաղը:

3.Նր.Ռուխկյան



1945թվականին լրանում էր Սայաթ-Նովայի մահվան 150-ամյա տարելիցը: Չկար բանաստեղծի նկարը: Հայտարարվում է փակ մրցանակաբաշխություն: Բոլոր այցելուները կանգ էին առնում 30-ամյա նկարիչ Հրաչյա Ռուխկյանի նկարի առջև: Նա շահեց միակ մրցանակը, ու Սայաթ-Նովան ժողովրդի սրտի մեջ մտավ որպես այդպիսին: Նր. Ռուխկյանը ստացավ Մարտիրոս Սարյանի օրհնությունն ու պատգամը.

-Դու պետք է ստեղծես մեր հանճարեղ կերպարները:Քեզ բնորդ կլինի պատմությունը: Մեր գրքերն ու գրիչները օգնության կգան: Գիտցի՞ր, կան հուշարձաններ, քանդակներ.քեզ բնորդ կլինի նաև ժամանակակից մարդը: Դու այդ կարող ես: <<Սայաթ-Նովան>> դրա վկայությունն է:

Հետագայում՝ 40 տարիների ընթացքում, Հրաչյա Ռուխկյանը ժողովրդին հանձնեց իր ազգի գանձերը՝ <<Բույլ հանճարաց>> նկարաշարը:

Քանդակագործ Լևոն Թոքմաջյանը հիշում է.<<Ռուխկյանը մեր մեջ մնաց իր <<Սայաթ-Նովայով>>: Երբ ռեժիսոր Կիմ Արզումանյանը ստեղծում էր համանուն կինոնկարը, ասաց, որ հենց դա էր բանալին ֆիլմի ստեղծման համար>>:

4.Հովհ.Թումանյանի <<Սայաթ-Նովայի շիրիմը>> հոդվածը

Մեր սիրելի նկարիչ Գ.Բաշինջադյանը անցյալները <<Մշակում>> մի նամակ էր տպել ու հիշեցրել էր մեր անմահ երգիչ Սայաթ-Նովայի շիրիմի խնդիրը:

Հիրավի, ծանր է, երբ միտք ես անում, էսքան հոյակապ մի տաղանդ, էսքան խորունկ մի հոգի, էսքան ազնիվ ու կենդանի մի սիրտ ու էսքան մոռացված մի գերեզման...

Այո՛, էս ազգը դառը ժամանակների ու վայրենի հարվածների տակ ջախջախված, խանգարված ու խառնված մի խալխ է դարձել ու դեռ ուշքի չի եկել նորից, մի ամբողջություն չի դարձել ու չի ապրում իր կյանքով, թե չէ ինչպե՞ս կարող էր պատահել, որ Սայաթ-Նովայի երգերն ու գերեզմանը մնային մոռացված:

Հայոց նորաբաց գրական ընկերությունը որոշել է մոտիկ առաջիկայում կազմակերպել հատուկ Սայաթ-Նովային նվիրված մի գրական-երաժշտական երեկո, և շիրիմի խնդիրն էլ էս անգամ կարգի կդրվի:

Եվ արժե, որ հայ ժողովուրդը երբեմն-երբեմն էս հարազատ, գեղեցիկ ու մեծ անունները հանդես բերի ու ջերմանա նրանց մշտավառ հոգիների անշեջ կրակով:

5. Կինոնկարներ

<<Սայաթ-Նովա>> կինոնկարը(1960 թ.)

*Սցենարի հեղինակ՝ Հրայր Մուրադյան
Ռեժիսոր՝ Կիմ Արզումանյան
Երգերի կատարող՝ Ն. Մնացականյան
Դերերը՝ Սայաթ-Նովա-Բարկեն Ներսիսյան
Աննա- Մետաքսյա Սիմոնյան
Թագավոր-Գ. Հարությունյան
Թագուհի- Հ. Հովհաննիսյան
Ավետ աղա- Ավետ Ավետիսյան*




<<Նոան գույնը>> կինոնկարը




Ռեժիսոր՝ Սերգեյ Փարաջանով
Նկարիչ՝ Ստեփան Անդրանիկյան
Կոմպոզիտոր՝ Տիգրան Մանսուրյան
Հրեշտակ- Սոֆիկո Ճիանուրելի
Փոքր գրող-Մ.Ալեքյան
Գրողի մենակատար-Վ.Գալստյան
Գրողը ծեր-Գ. Գեգեչկորի

6.Սայաթ-Նովան կերպարվեստում և քանդակագործության մեջ



Սայաթ-Նովա



ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մ. Աբեղյան-«Երկեր» 4-րդ հատ., 1970թ., էջ 535-541
2. Պ.Սևակ-«Սայթ-Նովա», 1969թ., էջ 6-482
3. Հովհ. Թումանյան-«Սայթ-Նովա», Եր., 1945թ.,
4. Ա. Արնաուդյան և ուրիշներ «Ձեռնարկ ուսուցիչների համար» 2005թ.,
5. www.sayat-nova.am
6. ru.wikipedia.org/witi/Caum-Hoba/
7. www.hy.wikipedia.org/Սայթ-Նովա/
8. KinoMAX.am-կ. Արգունյան «Սայթ-Նովա»